

ՄԱՅՐ ԱԹՈՒ

Մարտ 8 ին Ատրպատականի առաջնորդ Գերապատիւ Տ. Ներսէս եպիսկոպոսը, ըստ նախօրօք թոյլտուութեան ժամանեց Մ. Աթոռ:

Ն. Վեհափառութիւնն առանձին ունկնդրութիւն շնորհելով լսեց նորա զեկուցումները թեմի վարչական և դպրոցական գործերի, ինչպէս և գաղթականների վիճակի մասին:

Ն. Վեհափառութիւնն ընդ առաջ գնալով նորա խնդրին, որով միջնորդում էր դպրոցական դրամագլխի միջոցներից նպաստ տալ թեմի բրդախօս և թրքախօս Հայ գիւղերի դպրոցների պահպանութեան համար, պատուիրեց Ս. Սիւնօղին տալ տարեկան նպաստ Սուլդուզի, Սովուջբուլաղի, Միանդաբի և Բարանդուզի դպրոցներին մի հազար ռուբլի:

* * *

Մարտի 9-ին Ն. Վեհափառութեան հրամանով և Հայրապետական Կոնդակով պատուիրուեցաւ Ատրպատականի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսին տալ ծայրագոյն վարդապետութեան աստիճան Հայրապետական Դիւանապետ Տ. Տիրայր վարդապետին և Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Գարեգին վարդապետին:

Նոյն օրը Ս. Հռիփսիմէի վանքում արժանացան նոքա այդ աստիճանին:

* * *

Մայր Աթոռի նախկին միաբան Իսահակ Տէր-Ղազարեան, առանձին խնդրագրով դիմելով ազգիս Վեհ. Հայրապետին՝ իւր զղջումն էր դնում առ գահոյս Հայրապետի և խնդրում վերստին ընդունելով իրեն Մ. Աթոռի միաբանների շարքը՝ վերադարձնել իւր նախկին կարգը, որպէսզի նուիրէ իրեն ծառայելու Հայ եկեղեցուն:

Ն. Սրբութիւնը բարեհաճեց ներելով նորա սխալ քայլը, վերստին ընդունել նորան միաբանութեան շարքը և վերադարձնել նորա սարկաւազութեան կարգը և մարտ 9-ի սրբատառ Կոնդակով պատուիրեց Ս. Սինօղին մուծել նորան ի շարս հոգևորականների: Մարտ 14-ից շնորհունակ Իսահակ սարկաւազը մտաւ ի շարս միաբանների:

* * *

Նորին Վեհափառութիւնն ի նկատի ունենալով Ռուսական յաղթական զօրքի ձեռքով գրաւուած Մուշ քաղաքի, Ս. Կարապետի հնադարեան վանքի, ինչպէս և շրջակայքի վանքերի և գիւղական եկեղեցիների վիճակը, ուր հսկող աչքի պակասութեան պատճառով եղած այժմեան արգահատելի վիճակն օրէցօր աւելի ևս վատթարանում է, բարեհաճեց մի առանձին Յանձնախումբ կազմել ուղարկելու Մուշ և շրջակայքը, որոշ հրահանգութիւններով:

Այդ արշաւախմբի անդամներ նշանակուեցան Մ. Աթոռի միաբան շնորհունակ Իսահակ սարկաւազ Տէր Ղազարեան, Ճեմարանի տեսչի-օգնական պ. Աւետիք Տէր Պօղոսեան և Ճեմարանի ուսուցիչ պ. Բահաթուր Բահաթրեան:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մուշ քաղաքի եկեղեցիների, Ս. Կարապետի վանքի և այլ տեղերի թագստոցներում պահուած են եկեղեցական հնութիւնների, սպասների, զգեստների, ձեռագիրների մնացորդներ, որոնց տեղերը յայտնի են տեղական ժողովրդի գիտակ անձերի, ուստի ըստ յանձնարարութեան արժանահաւատ անձերի և հաստատութիւնների, արշաւախմբին իբրեւ օգնականներ և առաջնորդող անձեր տրուեցան, Մշի առաջնորդական փոխանորդ և ծխատէր Տ. Եղիշէ քհյ. Տէր Պարսամեան, Մշի քաղաքային ժողովի անդամ պ. Միսաք Բղէեան, Մշի Զորոյ-թաղի Ս. Աստուածածին եկեղեցու աթոռակալ պ. Արամ Փօթիկեան և Մուշի Ս. Կարապետի բազմամեայ սպասաւոր Յակովբ Ստեփանեան:

Արշաւախումբը պէտք է առաջնորդուի հետևեալ հրահանգութեամբ, տուած նոցա Հայրապետական Դիւանից:

«ա) Մուշի և նորա շրջակայքի ժողովրդեան գաղթի ժամանակ վանքերի և եկեղեցիների գոյքն ու զարդերը, եկեղեցական անօթները պահուած են թագստոցներում, որոնց տեղերը զիտեն մի քանի անձինք (. . . անուններ) . . . ցոյց կտան այն տեղերը, որտեղ պահպանուած են Մշոյ վանքի եկեղեցական սպասները, զարդերը, անօթները ևն: Աշալուրջ հսկողութիւն ունենալ, որ այդ թագստոցները բացուին անպատճառ ձեր ներկայութեամբ և առանց ձեզ ոչ մի թագստոց չբացուի: Ի յայտ եկած իրերի մասին կազմել տեղն ու տեղն արձանագրութիւն: Ձեր երեքիդ ներկայութեամբ և ստորագրութեամբ, ինչպէս և թագստոցի տեղը ցոյց տուող անձի ստորագրութեամբ:

«բ. — Բացի այդ . . . (անձներից), եթէ կգտնուին և այլ անձինք, որոնք զիտեն թագստոցի տեղեր, նոցա ցոյց տուած տեղերն ևս բանալ և արձանագրութեամբ հաւաստիացնել երևան եկած իրերը և մանրամասն նշանակել, թէ ո՞ր եկեղեցուն կամ վանքին է պատկանում:

«գ. — Մասնաւոր անհատների սեփականութիւն եղած կամ եղող թագստոցների վերաբերութեամբ ձեռնպահ մնալ, ապագայ թիւրիմացութիւնից խուսափելու համար:

«դ. — Մասնաւոր անհատների մօտ եղած եկեղեցական անօթներ, սրբութիւններ, զգեստներ, զարդեր, եկեղեցիներին կամ վանքերին վերաբերեալ ամէն տեսակի և պիտոյքի իրերն ու սեփականութիւնը յետ ստանալ և, եթէ պէտք զգացուի, դիմել տեղական իշխանութեան օգնութեան և օժանդակութեան:

«ե. — Վանքերին և եկեղեցիներին պատկանող ձեռագիրների վերայ ունենալ առանձին հոգածութիւն և բոլորը, ըստ կարելւոյն, ժողովել . . . արկղների և կամ պարկերի մէջ դասաւորել և ապահով եղանակով տեղափոխել Մ. Աթոռ:

«զ. — Ի մօտոյ ծանօթանալ եկեղեցիների, վանքերի, արդի վիճակի հետ, կազմել մի ցուցակ դեռ ևս չէն և կանգուն մնացածների, աւերեալների և կիսաւերների մասին, հնար եղածին չափ ճշդել նոցա ստացուածների տեղը,

չափը, արդի վիճակը: Եթէ որ և է կալուածագիր կամ արտօնագիր ունեն, ստանալ և բերել... Մայր Աթոռ:

«Է.—Մանօթանալ ժողովրդի այժմեան վիճակի դրութեան, քանակի, ուր լինելու և այլ նման խնդիրներին հետ և աշխատել ճշգրիտ թուական տուեալներ ունենալ այդ ամենի մասին...»

«Ը.—Աշխատել, հնար եղածին չափ, աւերից և կողոպուտից ազատուած ազգագրական, հնագիտական, արուեստի և այն մնացորդները ժողովել և նոյնպէս հասցնել Մ. Աթոռ:

«Թ.—Տեղական թշուառ Հայութեան մնացորդներին ցոյց տալ Ս. Էջմիածնի Եղբ. Օգնութեան Յանձնաժողովի միջոցներից հոգածութիւն և խնամարկութիւն...»:

Կարևոր ծախքերի համար Եղբ. Օգն. Յանձնաժողովը արշաւախմբի տրամադրութեան տակ դրեց 20,000 ռ., որպէս զի տեղն ու տեղը կարևոր հոգածութիւնները կատարուին:

Արշաւախումբը իւր հետ տարաւ նաև բաւական քանակութեամբ դեղեր: Խմբի հետ միացաւ նաև Եղբ. Օգն. Յանձնաժողովի ա. թուղթիկ խմբի ղեկավար բժ. Խոսրով Փանոսեան, որ մինչ այդ կառավարում էր Թալինի շրջանը:

Արշաւախումբը տարաւ նաև Զատիկական տօնի ընծաներ մեր քաջարի բանակի հերոսների համար, բաժանելու նոցա Ն. Վեհափառութեան կողմից, նորա սրտագին օրհնութիւնների և յաջողութեան բարեմաղթութիւնների հետ:

Արշաւախումբը ելաւ Մ. Աթոռից մարտ 29-ին Իգդիր և այնտեղից Արծափի և Խնուսի վերայով պիտի իւր ուղին շարունակէր դէպի Մուշ:

* * *

Մարտի 20-ին Երևանից Էջմիածին ժամանեց Երևանեան նոր նահանգապետ Ա. Ե. Սարէլբիցկիյ, որոշ յանձնարարութեամբ ներկայանալու Ն. Սրբութեան:

Վեհ. Հայրապետը բարեհաճեց առանձին ունկնդրութիւն շնորհել նորին Գերագանցութեան մօտ մի ժամի չափ:

* * *

Ն. Վեհափառութիւնն ի նշան իւր առանձին գոհու-
նակութեան դէպի Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցու
անդամ Եպիսկոպոսները, որոնք կատարեալ քրիստոնէական
սիրով վերաբերուեցին դէպի Հայկական դժբաղդութիւն-
ները, իրենց թեմերի մէջ առանձին հանգանակութեամբ
օժանդակութիւն ցոյց տալով արհաւիրքներէց փաստած-
ներին, առանձին «Աղօթքի Օր» սահմանած լինելով, որ-
պէս զի պատերազմի օրերը շուտ վերջանան և Հայ ազգը
իւր անդորրութիւնը գտնէ, այլ և յատուկ սիրով վերա-
բերուելով Ամերիկահայ գաղութին՝ եկեղեցի չունեցած
վայրերում իրենց եկեղեցիները տրամադրելի անելով Հա-
յածէս արարողութիւններ, — հաճեց առանձին կոնդակով
իւր գոհունակութիւնը յայտնել Դիթրոյիդ քաղաքի Ուիլմա
Եպիսկոպոսին, Քլիւլէնդ քաղաքի Լէոնարդ Եպիսկոպոսին,
Գրանդ-Ռապիտս քաղաքի Մըկ-Քորման Եպիսկոպոսին և
Ֆիլադելֆիայի Ռայլընդը Եպիսկոպոսին, տար. մարտ 21-ին:

* *
*

Ս. Էջմիածնի Եղբ. Օգնութեան Յանձնաժողովի նա-
խագահ Տ. Գարեգին ծ. վարդապետ Յանձնաժողովի գոր-
ծերով, տասնօրեայ արձակուրդ ստանալով, բացակայեց
Մ. Աթոռից:

* *
*

Մ. Աթոռիս Հիւրընկալ Տ. Թադէոս վարդապետի տեղ
Ն. Ս. Օժութեան հրամանով նոր Հիւրընկալ նշանակուե-
ցաւ, ապրիլ 1-ից, Տ. Իսահակ վարդապետ:

* *
*

Ն. Վեհափառութիւնը բարեհաճեց Մաղկազարդ կիւ-
րակէին, թէ ս. պատարագին և թէ երեկոյեան Դոնբացէքի
արարողութեան ներկայ գտնուիլ:

Ն. Սրբութիւնը, չնայած իւր անընդհատ պաշտօնա-
կան զբաղումներին, Մեծի-Պահոց տօնական օրերին, ինչ-

պէս և հասարակ օրերից շատերին, չէր դադարում Մ. Տաճար իջնել, աղօթելու իւր հօտի փորձութեան օրերը բաւ համարելու և վերջանալու համար:

* *

Ապրիլի 5-ի, Ռուսաց քաջարի զօրքի ձեռքով գրաւուած Տրապիզոնի առնելու լուրը Մ. Աթոռում ստացուեցաւ ապրիլի 6-ին:

Վեհ. Հայրապետի կարգադրութեամբ հետևեալ օրը, Աւագ-Հինգշաբթի, պատարագից յետոյ գոհաբանական մաղթանք կատարուեցաւ Մ. Տաճարում, ամբողջ միաբանութեան ներկայութեամբ, գլուխ ունենալով Ն. Ս. Օծութիւնը, աղօթելով առ Ամենաբարձրեալը յաղթութեան նորանոր պսակներ շնորհելու Զօրաց Բարձրագոյն Հրամանատար Թագաւոր Կայսեր, Կովկասեան ռազմաբեմի զօրքերի հրամանատար Օգոստափառ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին և ամբողջ բանակին:

Պատարագից յետոյ ժողովրդեան խուռն բազմութեան ուրախական գոչերով Վեհ. Հայրապետը բարձրացաւ Վեհարան, օրհնելով ժողովրդեան և Ռուս զօրքերի հրամանատարներին և ամբողջ բանակը:

Ն. Վեհափառութեան կողմից ուղարկուեցաւ շնորհաւորական հեռագիր Կովկասեան Ռազմաբեմի զօրքերի Հրամանատար Օգոստափառ Փոխարքային հետևեալ բովանդակութեամբ:

«Տիիսիս .

«Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան Փոխարքայ, Կովկասեան բանակի Գլխաւոր Հրամանատար Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին.

«Կարնոյ նուաճումից յետոյ սրտատրոփ և աղօթք ի շրթունս սպասում էինք Տաճկական ոյժերի երկրորդ կուռ ամբողթեան անկման լուրին: Ուրախակցութեան ամենաջերմ զգացումներով եմ մատուցանում Ձերդ Կայսերա-

«Կան Բարձրութեան՝ Ռուսաց քաջարի զօրքերի Կովկաս-
«սեան խորագէտ Հրամանատարիդ իմ սրտեռանդն շնոր-
«հաւորութիւններս Տաճկական երկրորդ ամբողջեան՝ Տրա-
«պիզոնի գրաւելու առթիւ:

«Փառք Ռուս հերոսական զօրքի ղեկավարին, փառք
«Ռուս Քրիստոսասէր զինուորութեան. յաւիտենական յուշ
«նոցա յիշատակին, որոնք իրենց կեանքը զոհեցին Ար-
«դարութեան յաղթանակի համար:

«Աղօթում եմ առ Ամենաբարձրեալը նորանոր յաղ-
«թութիւններ պարգևել յաղատութիւն Հայ տառապեալ
«ազգի Տաճկական լծից:

«Այսօր էջմիածնի Նախաթոռ Տաճարում սուրբ պա-
«տարագից յետոյ գոհաբանական մաղթանք կատարեցինք՝
«ամբողջ միաբանական ուխտի հետ, աղօթաւոր ժողովրդի
«մեծ բազմութեան ներկայութեամբ:

Գ Է Ո Ր Գ Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»:

Այս հեռագրին ի պատասխան ապրիլի 9 ին ստացուե-
ցաւ Ն. Կ. Բարձրութիւնից հետեւեալ հեռագիրը.

«Էջմիածին

«Նորին Սրբութեան

Գեորգ Կաթողիկոսի ամենայն Հայոց

«Ձերդ Սրբութեան բարեմաղթութիւններն ու շնոր-
«հաւորութիւնն ինձ անկեղծ բաւականութիւն պատճառե-
«ցին: Զերմագին շնորհակալութիւնս եմ յայտնում Ձեզ,
«Էջմիածնի միաբանութեան և ամենքին, որոնք Էջմիածնի
«Տաճարում աղօթեցին Ամենաբարձրեալին ռազմի դաշ-
«տում ընկած և մեր սրտին մօտ հերոս զինուորութեան
«համար և Ռուս զէնքի ապագայ յաղթանակների համար:

«Ամբողջ Կովկասի ազգաբնակչութեան հետ, ես ևս քաջ
«հաւատում եմ, որ Տիրոջ շնորհած հովանու տակ մեր անդը-
«հերոսական զինուորութիւնը Ռուսական դարաւոր թշնամու

«ոյժերն է խորտակում և ընդ միշտ կազատեն Քրիստոնեայ
«ազգութիւնները նոցա ճնշող Տաճկական լծից:

ԳԵՆԵՐԱԼ-ԱՊՐԻՏԱՆՏ

Ն Ի Կ Ո Լ Ա Յ »:

Տրապիզոնի առման առթիւ Ն. Վեհափառութեան կողմից
ուղղուեցաւ Գեներալ Իւզենիչին հետևեալ հեռագիրը.

«Կովկասեան գործող բանակ.

«Նորին բարձր գերագանցութեան Կովկասեան
«գործի հրամանատար հետևակ-գորաց-գեներալ
«Իւզենիչին.

«Կովկասեան աննկուն քաջերի յաղթական յառաջխա-
«ղացութիւնը Ռուսիոյ իսկական բոլոր զաւակների սիրտը
«ամենամեծ ուրախութեամբ է համակում: Տրապիզոնի
«գրաւման առթիւ էջմիածնի Նախագահ Մենաստանում,
«սրբազան Պատարագից յետոյ, գոհաբանական մաղթանք
«կատարեցինք, ամբողջ ուխտի և ոգևորուած ժողովրդիս
«ներկայութեամբ:

«Ի սրտանց շնորհաւորելով Ձեզ այդ մեծ յաջողու-
«թեան համար, օրհնում եմ Ձեզ, Ձերդ բարձր գերագան-
«ցութիւն, և հերոսական արիական գործին բոլոր մաս-
«նակցողներին, ցանկանալով կատարեալ յաղթանակ բար-
«բարոս թշնամու դէմ ի փառս Մեծ Ռուսիայի:

«Փառք յաղթական հերոսներին, յաւերժ յիշատակ
«արիական մահ գտածներին:

Գ Է Ո Ր Գ Ե.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»:

Այդ հեռագրին ի պատասխան ուղարկուեցաւ ապրիլ
10-ին հետևեալ հեռագիրը.

«Էջմիածին

«Գ Է Ո Ր Գ Կաթողիկոսի Ա. Մենայն Հայոց

«Սրտանց շնորհակալութիւններս եմ մատուցանում
«Ձերդ Սրբութեան, միաբանական ուխտին և բոլոր ներ-

«կայ եղողներին, որոնք իրենց աղօթքներն են վերառա-
 «քել Բարձրելոյն: Շնորհակալութիւն նաև Հովուապետիդ
 «շնորհաւորութիւնների և օրհնութեան համար:

Ի Ի Գ Ե Ն Ի Զ »:

* * *

Աւագ-հինգշաբթի օրը, երեկոյեան Ունիւռայի կար-
 գին, Ն. Վեհափառութիւնը բարեհաճեց Տաճար իջնել:
 Կարգը կատարուեցաւ ըստ աւանդական սովորութեան.
 հանդիսադիրն էր օրուայ սրբազան Պատարագիչ՝ Գեր. Տ.
 Սահակ արքեպիսկոպոս Այվատեան:

Ունիւռայից յետոյ, ըստ յատուկ պատուէրի Ն. Սրբու-
 թեան, Տ. Ղևոնդ վարդապետ Մարդուկէսեան Իջման ս. Սե-
 դանի առաջից բացատրեց աղօթողներին օրուայ խորհուրդը,
 յորդորելով ժողովրդին իրենց մէջ մարմնացնել Փրկչական
 խոնարհութեան մեծ օրինակը:

* * *

Զատիկական տօներն անցան ըստ սովորականի: Ն. Վե-
 հափառութիւնը հաճեց Ճրագալոյցի երեկոյեան Տաճար
 իջնել, ինչպէս և ներկայ գտնուիլ Զատիկական առաւօտեան
 ժամերգութեան և ս. Պատարագին, որից յետոյ կատարուե-
 ցաւ Հայրապետական գոհացողական մաղթանք և Մ. Աթոռի
 միաբանութիւնը իւր շնորհաւորութիւնները մատուցեց Տա-
 ճարում Ն. Սրբութեան՝ Հայրապետի Աջն առնելով:

Սովորական ընդունելութիւն չկար:

Զնայելով հեռագրական շնորհաւորութիւնների չըն-
 դունուելուն, բազմաթիւ գրաւոր շնորհաւորութիւններով
 թեմական առաջնորդները, փոխանորդները և հոգեորա-
 կաններ ու աշխարհիկ անձինք շտապել էին շնորհաւորել
 Նորին Սրբութեան Զատիկական Տօները:

* * *

Ն. Սրբութիւնն ի նկատի ունենալով կարնոյ և շրջակայքի վիճակը, ցանկացել էր մի բարձրաստիճան հոգևոր ներկայացուցիչ ունենալ ի մխիթարութիւն իւր նահատակ հօտի խղճուկ մնացորդների: Այդ նպատակով կարևոր համարեց դիմել Ն. Կ. Բարձրութիւն Տ. Փոխարքային, Նորահաճութիւնը խնդրելով: Տ. Փոխարքան բարւոք համարեց պատասխանել, որ ի նկատի ունենալով ներկայ պատերազմի վիճակը և այն հանգամանքը, որ տեղական զինուորական ու վարչական մարմինները հոգածու են ազատագրուած քրիստոնէութեան կարիքների, առայժմ պէտք կլինի յետաձգել հոգևոր ներկայացուցչի առաքումը, իսկ բարեպատեն ըռպէին ինքը կը յայտնէ այդ մասին:

* * *

Երկրագործութեան Նախարարութեան առանձին յանձնարարութեամբ Պետրոգրադից ուղարկուած է Պետրոգրադի կայսերական—Համալսարանի իրաւաբանական բաժնի պրիւատ-դոցէնտ Նիկոլայ Անտոնովիչ Լէնսկիյ նոր գրաւած Տաճկական Հայաստանի հողային խնդիրները և դորա հետ կապուած զանազան հարցերն ուսումնասիրելու:

Ակադեմիկ Ն. Ե. Մառի յատուկ յանձնարարականով պ. Լէնսկին Մ. Աթոռ ժամանելով տեսակցութիւն ունեցաւ իրեն հետաքրքրող հարցերի մասին Տ. Դիւանապետի հետ:

Ն. Սրբութիւնը բարեհաճեց առանձին ունկնդրութիւն շնորհել պ. Լէնսկուն իւր գիտողութիւններն անելով այդ կարևոր հարցի նկատմամբ:

Պ. Լէնսկին մի գիշեր վայելելով Մ. Աթոռի ասպնջականութիւնը, մեկնեց Երևան, խնդրին ի մօտոյ ծանօթանալու և նիւթեր ժողովելու, որից յետոյ կանցնի Վան և շրջակայքը, Մուշ ևն:

* * *

Վեհ. Հայրապետը յատուկ կոնդակով որոշ պաշտօն յանձնելով Եգիպտոսի առաջնորդ Տ. Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեանին, նուիրակութեան ուղարկեց Հնդկաստան և

մերձակայ հայաբնակ կղզիները՝ Ճաւա, Սումաթրա, Ինչ-
պէս Եթովպիա, Սուդան և սահմանամերձ վայրերը:

* *
*

Ն. Սրբութիւնը անցեալ տարի դիմած լինելով Եւրոպա-
կան Դաշնակից Պետութիւնների Վարչութիւնների Աւագնե-
րին, յանձնարարել էր իբրեւ Իւր լիազօր պատուիրակ և ներ-
կայացուցիչ ճանաչել Վսեմափայլ Պօղոս Նուպար փաշային:

Ապրիլի 21-ին Ն. Սրբութիւնն ստացաւ Ֆրանսիական
Հանրապետութեան Արտաքին Գործերի նախարար Արիս-
տիդ Բրիանից հետևեալ գրութիւնն այդ առթիւ:

ՆԵՐՈՐԸՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐՔԻՆ ԳՐԹԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ

ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹԻՒՆ,

1915 թ. հոկտեմբեր 5/18 նամակով
ինձ իրազեկ առնելով, որ Ձերդ Սրբ-
ութիւնը հաճել է Պօղոս Նուպար Փա-
շային պատուիրագիր տալով Իրեն ներ-
կայացուցիչ նշանակել Հասարակապե-
տութեան Կառավարութեան առաջ Հայ
Ժողովրդի շահերի պաշտպանութեան
համար, Ձերդ Սրբութեան հաճելի է
եղել արտայայտել ինձ և այն ըղձերն
ու զգացումները, որ Նա ունի Դաշնա-
կից Պետութիւնների զօրքերի յաղթա-
նակի նկատմամբ:

Հասարակապետութեան Կառավա-
րութիւնը շնորհապարտութեան զգա-
ցումով ընդունեց այդ բարձր համա-
կրութեան վկայութիւնը, որի արտայայ-
տութիւնը, մանաւանդ այն վայրկենին
երբ Սուրբ Էջմիածնի Առաքելական Ա-
թոռը կրում է այնպիսի դաժան փոր-

Նորին Սրբութեան
Տ. ԳԷՈՐԳԵ.

Ծայրագոյն Պատրիարք
և Կաթողիկոսի
Ամենայն Հայոց,
ի Սուրբ Աթոռն
Էջմիածնի,
ի Վաղարշապատ.

ձուլթիւններ, — առաւել ևս գնհատելի է
դարձնում այդ՝ այն երկրների համար,
որ մաքառում են այս բռալէիս հանուր
ոյժերով յանուն իրաւունքի, Արդարու-
թեան և Մարդկութեան պատուի:

Ձերդ Սրբութեան քաջ ծանօթ են
այն վշտագին յուզումները, որով Ֆրան-
սիան ևս հաղորդակից եղաւ միւս քա-
ղաքակիրթ ազգերի հետ այն սրտմտու-
թեան՝ ի դէմս այն հալածանքների լու-
րերի, որի զոհերն եղան կրկին Տաճկաս-
տանի Հայերը: Ամէն անգամ, երբ Ֆրան-
սիան հնար է ունեցած, ի նկատի ունե-
նենալով ներկայիս պայմանները, հզօ-
րապէս արտայայտելու Հայ ազգին իւր
խնամքը՝ Հասարակապետութեան Կա-
ռավարութիւնը հոգածու է եղած նոցա
զօրավիգ լինել և մեղմել նոցա տարա-
բաղդ վիճակի խստութիւնը: Ձերդ Սրբ-
ութիւնը կարող է վստահ լինել և հա-
ւատացած, որ Դաշնակից Պետութիւն-
ների համահաճութեամբ, այս միևնոյն
զգացումներով կը ձեռնարկէ նա Հայ
ժողովրդին ընձեռելու օրինական հա-
տուցումներ, երբ հանգամանքներն այդ
ներելու լինին:

Հաճեցէք ընդունել ջերմ յարգանացս
հաւաստիքը, որով պատիւ ունի կալ,

Տէր,

Ձերդ Սրբութեան

Ամենախոնարհ և

ամենահնազանդ ծառայ

Ա. ԲՐԻԱՆ

Փարիզ. 12 մարտ
1916 թ.

* *
*

(«Եղապարհ»)

Կովկասում «Զեմստվո» մտցնելու խորհրդակցութիւններին մասնակցելու համար, Կովկասեան Տ. Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական իշխան Օրլով, ըստ յանձնարարութեան Օգոստոսիան Փոխարքայի, հեռագրով, ապրիլի 21 խնդրել էր Ն. Սրբութիւնից՝ Հայ հոգևորականութեան կողմից երկու ներկայացուցիչ նշանակել Տփլիսում լինելիք խորհրդակցութիւններին մասնակցելու: Խորհրդակցութիւնները պիտի սկսուէին ապրիլ 26-ին:

Վեհ. Հայրապետը բարեհաճեց իբրև ներկայացուցիչներ նշանակել Գեր. Տ. Բագրատ Եպիսկոպոսին և Բարձր. Տ. Գարեգին ծ. վարդապետին, որոնք և ապրիլի 21-ին մեկնեցին իրենց առաքելութեամբ:

* * *

Ապրիլի 23-ին Մ. Տաճարում կատարուեցաւ գոհաբանական մաղթանք, Ս. Պատարագից յետոյ, Ն. Կ. Մ. Թագուհի Կայսրուհու անուանակոչութեան առթիւ:

Մաղթանքին բարեհաճել էր ներկայ լինել Ն. Սրբութիւնը, Միաբանական բոլոր ուխտի հետ:

Հանդիսագիրն էր Գեր. Տ. Աշոտ Եպիսկոպոս:

